մո, ի հայրապետութեանն տէր Յոհաննիսի: Ով զայս խափանէ...»[173]*, իսկ երկրորդում՝ 16 տողով՝ «Թիւն :ՈՀԳ:* [=1224 թ.] *էր: Ես՝ Սակռ,* որդի Վախտանգա, եղբայր Հասանա, *չինեցի զեկեղեցիս եւ եւս զորդի իմ զԳրիգորս՝ սպասաւոր, եւ զիմ արկած այգին ի ձաք իւր կատապանովն՝ իմ հոգոյս: Ով զայն խափանէ...»*[174]*: Ամենայն հաւանականութեամբ, երկրորդ վիմագրում նշուած նոյն Գրիգորը (Գրիգորէս), տարիներ անց եկեղեցու նորոգման առիթով նոյն պատի կենտրոնական մասում 7 տողով արձանագրել է. «Յիշխանութե՛ան բարեպաշտ արքային Զալալ Դաւլին եւ որդ[ոյ] իւրոյ Իւանոյ Աթաբակին, ես՝ Գրի՛գո՛ր*[175]*, որդի Սակռի, վերստին չինեցի զեկեղեցիս ի թու՛ս :ՉԸ:* [=1259 թ.]*[176], եւ սպասաւորք սորա պարտին ի տարոջ :Ա: ժամ Մեծ հնգշաբաթին ինձ՝ Գր՛իգո՛էս»*[177]*: 1224 թ. կառուցուած Բերդաձորի Ս. Գրիգոր եկեղեցու գաւթում պահպանուել է նաեւ 9 տողանոց եւ, ցաւօք, չթուագրուած տապանագրով («Այս է հանգիստ բարեպաշտ* պատրոնին Սակռի, *զոր տացէ Քրիստոս սմայ զարքա[յ]ութիւն երկնից. ամէն»*) *չիրմաքարը, որը Սեդրակ Բարխուդարեանը ենթադրաբար թուագրում է մօտաւորապէս ԺԳ. դ. կէսերով*[178]*:*

Այսպիսով, Վախտանգ (Տանգիկ)ի որդի եւ Հասան (Ջալալ)ի եղբայր «Սակռ» իշխանը ոչ մի կապ չունէր Ծարի իշխանաճիւղի հետ, ինչպէս սովորաբար կրկնւում է գրականութեան մէջ: Փոխարէնը, նա կարող է, մեր կարծիքով, մեծ հաւանականութեամբ նոյնացուել Հասան Ջալալի՝ Գանձասարի չինարարական եւ այլ վիմագրերից, Կիրակոս Գանձակեցուց եւ Վարդան Արեւելցուց Զաքարէ եւ Նասրադդօլա *(Նասր-Դօլա) անուններով յայտնի եղբօր հետ*[179]*: Մեծարանից Ս. Յակոբի վանքի երկու արձանագրութիւններում նա հանդէս է գալիս իբրեւ նուիրատու: Դրանցից մէկում (հիւսիսային եկեղեցու մուտքի մօտ, 23 տող, որ ընթերցել է Խաչիկ Դադեանը) յիշատակւում է նաեւ Զաքարէի կինը՝ Արզուխաթուն անունով, ինչպէս նաեւ վանահայր Սարգիսը, որը թուագրուած յիշատակումներ ունի 1223, 1225 եւ 1241 թթ. վիմագրերում (վերջինում՝ տէր Վարդանի հետ միասին)*[180]*. «Ես՝ Զաքարէ,*

---

173 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 114 (N 382):

174 Նոյն տեղում, էջ 115-116 (N 384): Համմտ. **Գ. Ե. Կիրակոսեան**, նշ. աշխ., էջ 174-175:

175 Ս. Բարխուդարեանը վերծանել է «Գրիգորիս», թէպէտ ստորեւ եւ երեք հարեւան վիմագրերում արձանագրուած անուանաձեւը է «Գրիգորէս» (տե՛ս նաեւ էջ 117, N 388) եւ «տէր Գրիգորէս» (էջ 116-117, N 385, 389):

176 Ս. Բարխուդարեանն այս թուականը վերծանել է «ՉՀ» (=1281), որը մեզ սրբագրելի է թուում՝ «ՉԸ» =1259 թ.: Այդ թուականին (ըստ Գանձակեցու՝ Իւանէի հայր Հասան Զալալը նահատակուեց 2 տարի անց՝ 1261 թ., գլ. ԿԳ, էջ 391-392) «ՏԷր Գրիգորէս»-ը յիշատակուած է եկեղեցու հարաւային պատին Ամարասի եպիսկոպոսի թողած 13 տողանոց վիմագրում (նոյն էջում, N 385), ուր յիշւում է եկեղեցու՝ աւերուշտ, նոյն նորոգումը («Թվի՛ն :ՉԸ: *[=1259 թ.]*. ես՝ տէր Գրիգոր Ամարասա եպիսկոպոս, միաբանեցա սո՛ւրբ ո[ւ]խտիս եւ ետու զամէն վարձս *վարդպետին*, որ *չինեց* զեկեղեցիս: Առաջնորդ տեղիս *տէր Գրիգորէս* եւ ա[յլ] միաբանքս կարգեցին ինձ ի տարոջն :Գ: ժամ»): Վրիպման պատճառ կարող էր լինել Ը տառի աջ ուղղաձիգ ստեղնի փորուածքը թուականին յաջորդող կրկնակէտի հետ շփոթելը:

177 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 116 (N 387): Ս. Բարխուդարեանը վերջին բառը քերականական համապատասխանութեան նկատառումով վերականգնում է «Գրի՛գո՛էս[իս]»:

178 Նոյն տեղում, էջ 120 (N 399):

179 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 40, N 82 («իմ եղբաւրն Զաքարէի»). **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, գլ. Լ, էջ 268 («զՋաքարէ»). **Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ** *Պատմութիւն տիեզերական*, էջ 184 («զՋաքարէ, որ եւ Նասրատալէ»):

180 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, 13, N 4, 5 («Տէր Սարգիս»), 6 («տէր Սարգի՛ս եւ տէր Վարդա՛նի»): Սարգիս անունով վանահայր Ս. Յակոբի վանքում եղել է նաեւ 1270-1290-ական թթ., տե՛ս էջ 16, N 15 («տէր Սարգի՛ս»), էջ 16-17, N 16, 17, 18 (վերջին երեքում, գուցէ, ճիշտ կը լինէր վերծանել ոչ թէ «տէրս», այլ «տէր Սարգիս»): Անթուա-